ԵՐՆՋԱԿ ԲԵՐԴԸ

ԱՐԴԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

Պատմական Հայաստանի նշանավոր բերդերից էր Սյունիքի իշխանների հզոր բերդ-դղյակ Երնջակը, որը գտնվում էր Նախիջևանի Երնջակ գավառում։ Մինչև այժմ այդ բերդը պատմահնագիտական սպառիչ ուսումնասիրության չի ենթարկվել։ Հայկական և օտար աղբյուրներում բազմիցս հիշատակվող Երնջակ բերդը XIX դ. կեսերից սկսած, որպես նշանավոր համալիր, խիստ համառոտ նկարագրությամբ տեղ է գտել ռուսերեն հրատարակված մի քանի տեղագրական-աշխարհագրական աշխատություններում[1]։ Այն մասնակի ուսումնասիրությամբ ներկայացրել են նաև Ա. Սեդրակյանը[2], Ղ. Ալիշանը[3], Մ. Սմրատյանցը[4], ռուս հետազոտող Ի. Շչեբլիկինը[5] և ուրիշներ։

Աղբյուրներում Երնջակ անվամբ են կոչել Նախիջևանի հնագույն գավառներից մեկը, որի տարածքն ընդգրկում էր այժմյան Նախիջևանի ԻՍՍՀ Ջուլֆայի շրջանը, այդ գավառի վաղ միջնադարյան նշանավոր քաղաքը, բերդը և ամենամեծ դեմը։ Երնջակը որպես Սյունյաց աշխարհի առաջին գավառ հիշատակում են VII դ. «Աշխարհացույցը»[6] և հետագա դարերի պատմիչները։

Երնջակը իբրև իշխանական բերդ-դղյակ հիշատակված է X դ. պատմիչներ Հ. Դրասխանակերտցու[7], Ասողիկի[8] և այլոց աշխատություններում, իսկ Ստ. Օրբելյանի մոտ Երնջակի և առհասարակ Սյունյաց գավառների ու հուշարձանների վերաբերյալ կան հստակ շարադրված և հավաստի տեղեկություններ[9]։ Անդրադառնալով «Երնջակ» բառի ստուգաբանությանը, Հ. Աճառյանը գրել է. «Երնջնակ կամ Երնջակ (գրված նաև Երնջայ, Երնջան,

---

1 «Обозрение российских владений Закавказом», СПб., 1836, часть IV, *էջ 338*, И. Озаровский, Опыт военного обозрения Закавказья, СПб., 1883, *էջ 85*։

2 *Ա. Սեդրակյան, Հնություն հայրենյաց ի գավառին Երնջակու, Վաղարշապատ, 1872, էջ 89—100*։

3 *Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1894, էջ 363—366*։

4 *Մ. Սմրատյանց, Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակա և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 518—529*։

5 И. Щеблыкин, Памятники Азербайджанского зодчества эпохи Низами (материалы), Баку, 1943, *էջ 69—71*, «Архитектура Азербайджана эпохи Низами», М.—Б., 1947, *էջ 36—38*։

6 *Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 51*։

7 *«Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 241, 307*։

8 *«Սեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 165*։

9 *«Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 13, 185, 190, 195 և այլն*։

երննակ, երիննան, երիննակ) «մի տեսակ ուտելի փուշ. eryngium campestre L, ...«Հյ. երինջ բառից է»[10]։

«Երնջակ» բառը փորձել են ստուգաբանել նաև մի քանի ազգբեջանցի հետազոտողներ, որոնք, սակայն, հանգել են թյուր եզրահանգումների։ Դա պայմանավորված է նրանով, որ նրանք անտեսել են Երնջակ բերդի մասին հայկական աղբյուրների հաղորդած հավաստի տեղեկությունները, ինչպես նաև «Երնջակ» բառի ուղիղ ու նախնական ձևը։ Այսպես, օրինակ, Ռ. Մամմադովը Երնջակ բերդի մասին հրատարակած հոդվածում[11], անտեսելով սկզբնաղբյուրները և Երնջակ տեղանվան ուղիղ ու նախնական ձևը, թվարկում է այդ անվան ավելի ուշ շրջանում (XIV—XVII դդ.) ասպարեզ եկած օտար անվանումները (Ալինջա, Ալանչուգ, Ալինջախանա և այլն), որոնք արդյունք են Նախիջևանի տարածքում օտար էթնիկական տարրի բնակություն հաստատելու։ Նա ի վերջո եզրակացնում է, թե բերդի անունը Ալանչիկ է, և որ այդ «անունը հին թուրքական «ալան» խոսքից է վերցված, որ նշանակում է «հարթություն», «հրապարակ»։ Ռ. Մամմադովը բառի երկրորդ մասնիկը՝ «չիկ»-ը, ստուգաբանում է հետևյալ կերպ. «չիկ»-ը թուրքական լեզուներին հատուկ փոքրացնելու նկարագրությունն է»։ Այսպիսով, ստացվում է, որ բերդանունը ոչ թե Երնջակ է, այլ Ալանչիկ, որը նշանակում է փոքր հարթություն, հրապարակ։ Այն, որ այս ստուգաբանությունը գիտական չէ, երևվում է անգամ բերդի տեղադրությունից։ Բանն այն է, որ բերդը տեղադրված է ոչ թե հարթ վայրում կամ հրապարակում, այլ մի վիթխարի լեռնագագաթի վրա (նկ. 1)։

Երնջակին անդրադարձած մի այլ հոդվածագիր՝ Ա. Սուլթանովը[12], հերքելով Ռ. Մամմադովի ստուգաբանությունը, պնդում է, որ «Ալինջա բերդի իսկական անունը «Ալընջա» է»։ Նա ևս ծայրահեղությունների մեջ ընկնելով՝ գրում է, որ բերդի անունը «իսկապես, թուրքական խոսքից է վերցված։ Բերդի շրջակայքում եղած մի շարք գյուղերի անունները այսպես են ապացուցում,— շարունակում է նա,— որ գյուղերի անունները տեղական թուրք տոհմերի կողմից են դրված»։ Ուրեմն, ըստ Ա. Սուլթանովի, պատմական Երնջակ գավառի Ապարանք, Ապարաններ (այժմ Բանանիյար), Ապրակունիք, Աբրակունիս (այժմ՝ Արրակունիս), Նորաշեն, Ամասրոյ վանք (այժմ՝ Արաֆսա), Բերդիկ, Շահկերտ (այժմ՝ Ղազանչի), Անկուզիք (Անզուր), Փորադաշտ, Գազ. Շոռոթ, Թեղեակ (այժմ Թեյվազ) և այլ գյուղերի անունները, որոնք գրավոր աղբյուրներում հիշատակվում են X—XIII դդ., ծագումով թուրքական են։ Սա պատմական ճշմարտությունը անտեսելու ակնհայտ մի փորձ է։

Ռ. Մամմադովը և Վ. Ալիևը համատեղ գրած մի այլ հոդվածում[13], վկայակոչելով XVII դ. թուրք պատմիչ է. Չելեբիի այն հիշատակությունը[14], թե

---

10 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 68։

11 «Совет кэнди», 23. X. 1971.

12 „Wәрг гапысы». 30. IX. 1971.

13 „Wәрг гапысы». 11. I. 1972.

14 «Թուրքական աղբյուրներ», Գ, Էվլիյա Չելեբի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 73։ Է. Չելեբին Երնջակն անվանել է «էլնեջար Վան բերդ»։ Իսկ XVII դ. մեկ այլ պատմիչ՝ Քյաթիբ Չելեբին, Երնջակն անվանել է «էլիչեկ» («Джихан-Нюма» и «Фезлике» Кятиба Челебн как источник по истории Армении. Предисловие, перевод и комментарии А. А. Папазяна, Ереван, 1973, էջ 103)։

Երնջակ բերդը Մոնլա Կութբագինի կողմից է կառուցվել, եզրակացնում են, որ է. Չելեբին նկատի ունի «Քիթաբի Դեդե-Կորկուտ» էպոսի[15] մեջ հիշատակվող սելջուկ սուլթան Կութբադին Մալիքշահին (XII դ. վերջ)։ Բայց չէ՞ որ սա ուշ միջնադարի հեղինակի հիշատակություն է, այն էլ XI—XII դդ. ստեղծված վիպական բնույթի երկի՝ էպոսի, մասին։

Պատմական իրողությունն այն է, որ Երնջակ բերդի անունն ի սկզբանե էլ Երնջակ (Էրինջակ) է եղել և այն կառուցվել է դեռևս մեր թվարկությունից առաջ և մինչև V դ. վերակառուցվել է սյունյաց իշխանների ջանքերով՝ IX—X դդ. դառնալով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի կենտրոններից մեկը։ Ըստ Ստ. Օրբելյանի տեղեկությունների, «Իսկ մի ոմն ի կանանց նոյն նահապետացն (Սյունիքի—Ա. Ա.) Երնջիկ անուն, շինէ և ցանհնարին ամուրն Երնջակ. և յիւր անուն բերդն և գաւառն կոչի Երնջակայ. և դնեն ի նմա տուն դանձու և հարկաց աշխարհին»[16]։ Ինչպես երևում է այս վկայությունից, Երնջակ բերդը ստացել է իր կառուցողի անունը և սկզբից ի վեր եղել է «զանհնարին ամուրն», որտեղ պահվում էին Սյունիքի գանձերն ու հարստությունները։ Երնջակը որպես բերդ գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է 909 թ. արաբ Յուսուփ էմիրի կողմից պաշարվելու կապակցությամբ (Հ. Դրասխանակերտցի, Ասողիկ, Ստ. Օրբելյան և ուրիշներ)։ 908 թ. Սյունիքի տանուտեր Աշոտ իշխանի մահից հետո, նրա կին Շուշանը, որդիներ Սմբատը, Սահակը, Բաբգենը և Վասակը պատրաստվում են պայքարելու հարձակման նախապատրաստվող Յուսուփի բանակի դեմ, որը Ստ. Օրբելյանի խոսքերով ասած «կամէր կլանել զամենայն Հայաստանեայս։ Եւ հասեալ ի Նախջաւան քաղաք յաւուրս սուրբ պասեքին, և ասպատակ սփռեալ կամեցաւ ջնջել զգաւառն Սիւնեաց և գբռամբ ածել զիշխանսն»[17]։ Էմիրի զորաբանակի առաջին հարձակումը ետ մղելուց հետո «զմայրն իւր (Սմբատի—Ա. Ա.) զՇուշան և զկին իւր Սոփի, որ էր դուստր Դերենկին՝ քոյր Գագկայ թագաւորելոյն ի Վասպուրական, փոքրիկ ստնդեայ տղայով միով, և զկինն Սահակայ՝ եղբօր իւրոյ, որ էր (դուստր) բդեշխին Գուգարաց, տարեալ ամրացուցանեն յանառիկ ամուրն Երնջակայ...»[18]։ Այնուհետև ցանկանալով Յուսուփի ուշադրությունը շեղել Երնջակից, Սմբատը «գնայ առ աներն[19] իւր Գագիկ ի Վասպուրական. և Սահակ՝ առ իւր աներն ի Գուգարս. բայց Բաբգէն և Վասակ մնացին անդէն. և Գրիգոր Սուփան և եղբարք իւր մնան յիւրեանց տեղիս ամրացեալք ի կատարս լերանց և ի ծործորս ծերպից վիմաց...»[20]։ Երկար ժամանակ բերդի պաշտպանները դիմադրում են էմիրի ստվարաթիվ բանակին։ Մեծաթիվ զոհեր տված Յուսուփը 909 թ. սրի է քա-

---

15 Ըստ այդ էպոսի Երնջակ բերդը պատկանում էր Գարա Թեկֆուր անունով մի մարդու։ Էպոսի ստեղծման աշխարհագրական միջավայրը Անդրկովկասն էր, որտեղ XI դ. հետո այն ձևավորվեց և որտեղ կիսաքոչվորական ու քոչվորական կյանք էին վարում նրա հերոսները՝ սելջուկ ֆեոդալները (В. Бартольд, Турецкий эпос и Кавказ, «Язык и литература», т. V, Ленинград, 1930, էջ 11—12)։

16 Ստ. Օրբելյան, էջ 13։ Մ. Սմբատյանցը Երնջիկին նույնացնում է Տիգրան Մեծի քրոջ՝ Տիգրանուհու հետ (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 512—513)։

17 Ստ. Օրբելյան, էջ 185։

18 Նույն տեղում։

19 Բնագրում, կարծում ենք, պետք է լինի «աներձագն», քանի որ Սոփին Գագիկ Արծրունու հոր՝ Դերենիկի, դուստրն էր և ոչ թե Գագիկի։

20 Ստ. Օրբելյան, էջ 185—186, հմմտ. Հ. Դրասխանակերտցի, էջ 237։

շում կամ գերեվարում Երնջակի և շրջակա գավառների բնակչությանն ու գնում Դվին[21]։ Գեղարքունիքի գահակալ իշխան Գրիգոր Սուփան իշխանն ու Սմբատի եղբայր Վասակը, ըստ երևույթին ընկճվելով և տեսնելով անմեղ ժողովրդի կոտորածը, իջնում են բերդից և գնում են Դվին ու հանձնվում Յուսուփին, որը նրանց բանտարկում է։ Սակայն հետո Վասակին հաջողվում է փախչել և նորից ամրանալ բերդում։

Հայոց աշխարհում մի շարք ավերածություններ կատարելուց հետո Յուսուփը, որին հաջողվել էր գերել Հայոց Սմբատ Բագրատունի թագավորին, «գայ ի մարտ ընդ անառիկ ամրոցին Երնջակու... Եւ մարտ սաստիկ յօրինէ ընդդէմ բերդին բազում աւուրս. և օր աւուր զանազան հնարիւք խստացուցանէր զմարտն, և ոչ ինչ օգտէր։ Յորմէ զչարեալ տայր բերել զթագաւորն հանդէպ բերդին. և զանազան կոտանօք չարչարէր, և հրամայէր. «ասա՛, զի տայցեն ի դուրս զբերդն»։ Եւ նորա իմացեալ զանզերծանելի ղչարն՝ ոչ ինչ խօսէր»[22]։ Ջայրացած Յուսուփը հրամայում է Սմբատին գլխատել և մարմինը կախել Դվինի պարսպից։ «Եւ եղև այս ի թուականին Հայոց 362 (913)»,— գրում է Ստ. Օրբելյանը[23]։ Երնջակի դիմադրությունը շարունակվում է նաև Սմբատի գլխատումից հետո։ Բայց ի վերջո Յուսուփը «գողութեամբ էառ զբերդն անձաւամուտ և քարագնաց արամբք, որք երկաթի ճանկօք ընդ ժայռս դժուար վախից արուեստակեալ ընթանան։ Բայց թէպէտ և էառ, ոչ ի մարդկանց հնարից. այլ Տէր եղծանելով եղծանել կամէր, և մատնեաց։ Ապա բացեալ զդուրս բերդին...»[24]։

Երնջակի անկումից հետո Յուսուփը գերում է այնտեղ ապաստանածներին, տիրանում բերդում պահվող գանձերին ու հարստություններին[25], իսկ բերդը և համանուն գավառը հանձնում Գողթն գավառի ամիրային[26]։ Որոշ ժամանակ անց, մոտավորապես X դ. 20-ական թվականներին, Սմբատ իշխանը և նրա եղբայրները փորձում են բերդը և գավառը ետ գրավել, սակայն չեն կարողանում։ Այդ պայքարում զոհվում է Սմբատ իշխանի կրտսեր եղբայրը՝ Վասակը[27]։

Հայ ժողովրդի պետականության անկումից հետո, երբ Հայկական լեռնաշխարհը դարձավ օտար նվաճողների ասպատակությունների ասպարեզ, Երնջակ բերդը, որը կարևոր ռազմաստրատեգիական կետ էր Արաքսի ափին, կովախնձոր դարձավ մեկը մյուսին հաջորդող նվաճողների միջև, որոնք և մի քանի անգամ վերանորոգել են բերդը։ XII դ. 30-ական թվականներից Նախիջևանի գավառների հետ միասին Երնջակ բերդն անցավ Ելտկուզյան աթաբեկության տիրապետության տակ։ Ելտկուզյանները հետագայում Երնջակ բերդն ու գավառը, ինչպես նաև «զՇահուկ և զՔալասարհն և ի Նախջաւան յաւագ փողոցին 30 կուղպակ» որպես հայրենական կալվածք «մեծ սիգելով

21 Նույն տեղում, էջ 186։

22 Նույն տեղում, էջ 190—191։

23 Նույն տեղում, էջ 191, հմմտ. Հ. Դրասխանակերտցի, էջ 237—240

24 Ստ. Օրբելյան, էջ 191։

25 Հ. Դրասխանակերտցի, էջ 241, Ասողիկ, էջ 165, Ստ. Օրբելյան, էջ 191։

26 Հ. Դրասխանակերտցի, էջ 307—308, Ստ. Օրբելյան, էջ 195։

27 Հ. Դրասխանակերտցի, էջ 308, Ստ. Օրբելյան, էջ 196։

և անանցական գրով»[28] նվիրում են սյունյաց օրբելյաններից Ելիկումին։ Այդ նվիրատվությունը հաստատում են նաև մոնղոլները[29]։ Ըստ ձեռագիր հիշատակարանների տեղեկությունների[30], Երնջակ բերդը մինչև XIV դ. 70-ական թվականները պատկանել է սյունյաց իշխաններին, ապա անցել է Ջելայիրյաններին։

Երնջակ բերդի պատմական անցյալում հատկապես առանձնանում է Լենկ-Թեմուրի (XIV դ.) և նրա հետնորդների զորաբանակների դեմ մղած հերոսական պայքարը։ Թ. Մեծոփեցին գրում է, որ Լենկ-Թեմուրը «836 (1387) թուականին... եկն յերկիրն Սիւնեաց ի վերայ դղեկն Երնջակու...»[31]։ Ջկարողանալով գրավել այն, Լենկ-Թեմուրը Միհրանշահի գլխավորությամբ թողնում է հատուկ զորաբանակ, որը 13 տարի («յՊԼԵ ամէն մինչև ի ՊԽԸ ամ թուականին») պաշարման մեջ է պահում Երնջակը[32], ուր պահվում էին Ջելայիրյանների գանձերը։ Բերդի պաշտպանությունը ղեկավարում էր Սուլթան Ահմեդի որդի Թահիրը, որին օգնության է հասնում վրաց Գեորգի VII թագավորի զորաբանակը։ Պաշարման ժամանակ բերդում էր գտնվում նաև ժամանակի նշանավոր մտածող, քերականագետ Մատթեոս Ջուղայեցին[33]։ Հերոսական և տեվական դիմադրությունից հետո ի վերջո Երնջակը գրավվում է։ Հետագայում, երբ Լենկ-Թեմուրը հերթական արշավանքից վերադառնում էր Թավրիզ, «եկավ տեսնելու այն բերդը, որը առաջներում գրավել էին, [այն է՝] Ալինջան։ Եվ անհամար զորքով և գույնզգույն վրաններով շարժվեց, եկավ ու դիտեց Ալինջա բերդը»[34]։ Լենկ-Թեմուրը բարձրանում է բերդ և մանրամասն ուսումնասիրում նրա պաշտպանական կառուցվածքը։

Երնջակը XV դ. 20-ական թվականներից հետո գրավում է Հայաստան ներխուժած կարա-կոյունլուներից Գարա Յուսուֆի որդի Իսկանդարը, որի դեմ 1435 թ. պատերազմի է դուրս գալիս Լենկ-Թեմուրի որդին՝ Շահռուհը[35]։ Հետագայում՝ 1480 թ., Երնջակին տիրել է Սեյտի Ալին, իսկ XVI դ.՝ Շահ Իսմայիլը։ Շահ Աբասի օրոք (XVII դ.) այն գրավել էր Ամիրգունա խանը։ 1826—1827 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին բերդը գտնվում էր պարսիկների ձեռքում, որոնց պարտությունից հետո՝ 1827 թ. հոկտեմբերից, Երնջակը որոշ ժամանակ մայոր Կուշլյանսկու վաշտի համար վեր էր ածվել զորատեղիի[36]։

---

28 Ստ. Օրբելյան, էջ 393—395։

29 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 479, Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն 2-րդ, Երուսաղեմ, 1944, էջ 58, Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 209։

30 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 364։

31 «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաշորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցւոյ», Փարիզ, 1860, էջ 17։

32 Լ. Խաչիկյան, Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը («Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 61)։

33 Նույն տեղում։

34 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Դ, Երևան, 1955, էջ 15։

35 Երնջակ բերդի հետ կապված այս և հետագա այլ դեպքերի մասին տե՛ս Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 364—366։

36 И. Озаровский, նշվ. աշխ., էջ 86։



Նկ. 1. Երնջակ լեռան ընդհանուր տեսքը։

Երնջակ բերդը կառուցվել է ծովի մակարդակից մոտ 1600 մ բարձրություն ունեցող լեռան վրա (նկ. 1)։ Շրջակա դաշտավայրերից այդ լեռան բարձրությունը կազմում է ավելի քան 500 մ։ Լեռն իր վերնամասում բաժանված է երկու սրագագաթ ճյուղերի։ Բերդի կառուցողները հմտորեն են օգտագործել տեղանքի անառիկությունը։ Բանն այն է, որ Երնջակ լեռան ուղղաձիգ ժայռերն ինքնին բնական, անմատչելի և անհաղթահարելի արգելքներ են թշնամիների համար։ 1405 թ. հունիսին Իսպանիայի դեսպան Կլավիխոն, անցնելով Երնջակ գավառով, գրել է. «մեզ ցույց տվին մի ամրոց, որ գտնվում էր մեր ձախ կողմը՝ բլուրի կատարում, [բավական հեռու Արազ գետի հյուսիսային եզերքում], որ կոչվում է Ալանջիկ։ Այս ամրոցը շրջապատված է պարսպով՝ աշտարակներով, և ներքին շրջանակում տարածվում են շատ այգիներ ու պարտեղներ, և կից ցորենի արտեր, նույնպես այնտեղ կան բազմաթիվ աղբյուրներ՝ արոտավայրերով՝ կենդանիների համար, ամրոցի շուրջը և վերևի բարձունքներում»[37]։

Երնջակ լեռան հյուսիս-արևմտյան գագաթնամասի բավականին հարթ և հարմարավետ, չորս կողմից բնականից հիանալիորեն պաշտպանված բարձունքում կառուցվել է իշխանական պալատ, որը աչքի է ընկել և՛ իր բնական անառիկ ու իշխող դիրքով, և՛ որպես ճարտարապետական համալիր։ Իշխանական պալատը բաղկացած է եղել կամարակապ ու սյունազարդ տաճարից, սպասասրահից, դահլիճից, նեղ միջանցքներից, պալատական, ծառայողական մի շարք սենյակներից, ռազմական, տնտեսական բնույթի պահեստներից և բնակելի սենյակներից։ Վերջիններս կապված են իշխանական պալատի հետ և ունեն 0,65—1,1 մ լայնությամբ մուտքեր, 2,4—5 մ լայնություն և 3,5—7 մ

37 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, ԺԳ—ԺԶ դար (1253—1582), Երևան, 1932, էջ 116։

երկարություն։ Շինություններն իրար միանալով նեղ միջանցքներով՝ իրենց հակատային մասի մուտքերով կապվել են պալատական շենքի հրապարակի հետ։ Առանձին շինությունների ավերակներն ապացուցում են, որ դրանք եղել են երկհարկանի։ XIX դ. սկզբներին, երբ պալատական համալիրի շինություններին մեծ մասը դեռ կանգուն է եղել, Երնջակ բերդ այցելած Վ. Գրիգորևը նկատել է, որ նրա պալատի և բերդի մյուս շինություններում կարող էր բնակվել շուրջ երկու հազար մարդ[38]։ Այժմ իշխանական պալատի և նրա համալիրի շինությունների մեծ մասն ավերակ են կամ քայքայված են մինչև հիմքերը (նկ. 2)։ Որոշ սենյակների պատերը դեռևս կանգուն են՝ մինչև 1,6 մ

Նկ. 2. Երնջակ բերդի իշխանական պարանքի ավերակները։

բարձրությամբ։ Մեր կատարած ուսումնասիրությունները թույլ են տալիս կազմելու Երնջակ բերդի իշխանական պալատի համալիրի շինությունների մի մասի հատակագիծը (նկ. 3)։ Համալիրի շինությունների մեծ մասը սկզբում կառուցված է եղել կապտերանգ սրբատաշ և կիսամշակ քարերով ու կրաշաղախով, որի շարվածքները (հիմքում 2—3 շտրք բարձրությամբ) այժմ էլ տեսանելի են։ Հետագայում դրանք տեղ-տեղ վերանորոգվել են նաև թրծած աղյուսով։ Ընդ որում, պարզորոշ նկատվում են վերջին 6—7 դարերում կատարված մի քանի նորոգումների հետքեր, որոնց ժամանակ օգտագործված աղյուսներն ունեն տարբեր չափեր։ Իշխանական պալատ բարձրացել են միայն նրա հարավ-արևելյան կողմի անկյունային հատվածից։ Այստեղ գտնվող ուղղաձիգ և լերկ ժայռն ունի որոշ թեքադիր հատված, որը շինարարները օգտագործել են բացառիկ հմտությամբ և ժայռի վրա փորել դեպի վերև տանող 30 սմ լայնությամբ ու 10—15 սմ խորությամբ ուղի։ Խիստ դժվարանցանելի այդ նեղլիկ ուղիով բարձրացողներին ցած ընկնելուց ապահովագրելու համար 0,5—2 մ ներքև, 2—3 շարքով, տարբեր տեղերում փորվել են 25×40 սմ չափի փոսեր։ Իշխանական պալատի համալիրից 300—400 մ դեպի հյուսիս և արևելք՝ լեռան գագաթնամասերում, կան նաև

[38] «Обозрение российских владений Закавказом», СПб., 1836, часть IV, էջ 335։

մի շարք շինություններ, պահակատեղերի ու քողարկված դիտարանների ավերակներ։

Բազմաբնույթ շինություններով ու ամրություններով հարուստ են հատկապես լեռան հարավ-արևելյան գագաթը և նրա լանջերը։ Այստեղ ևս կան մի շարք ամրությունների ու աշտարակների, դիտարանների, զորանոցների, բնակելի և այլ բազմազան սենյակների ավերակներ, ջրամբարներ և այլն։ Բերդի կառուցման ժամանակ առանձին տեղերում օգտագործվել է նաև ան-



Նկ. 3. Երնջակ բերդի իշխանական ապարանքի համալիրի մի մասի հատակագիծը։

տաշ, անշաղախ շարվածք։ Այս շարվածքների շինարարական տեխնիկայի (հիմնաշարի բացակայություն, հարթ ծածկեր և այլն) ուսումնասիրությունը մատնանշում է ուրարտական շինարվեստը։ Բերդի ավերակների վերգետնյա մասերում կան IX—XVII դդ. թվագրվող խեցեղենի բեկորներ, ինչպես նաև մետաղյա, փայտյա և քարե իրերի մնացորդներ։

Երնջակ բերդի վաղ շրջանի կյանքի ու շինարվեստի մասին պատկերացում են տալիս հատկապես նրա պարսպաշարքերի շինարարական տեխնիկան և ճարտարապետական առանձին սկզբունքները։ Բերդը բնական ամրություններից բացի շրջապատված է նաև արհեստական ամրակուռ պարիսպներով, որոնց անհրաժեշտությունը ծագել է լեռան գագաթնամասը երկու մասի ճյուղավորված լինելու հանգամանքով։ Հետևաբար, այստեղ բարձրանալ կարելի է միայն լեռան հարավ-արևելյան և հյուսիս-արևմտյան կողմերում առաջացած անդնդախոր նեղ կիրճերից, որոնց մուտքերը փակելու համար կառուցվել են մի շարք պարսպաշարքեր և բերդն ամբողջովին դարձրել դժվարամուտ։ Բերդի պարիսպները սկսվում են անմիջապես ժայռաշղթաները գոտկող կիրճերի պռունկներից։ Պարիսպները հիմնականում շարված են անմշակ և կիսամշակ քարերով, կրաշաղախով։ Հետագայում, առանձին հատվածների վերևի մասերում օգտագործվել է նաև աղյուս։ Պարիսպները, որոնց լայնությունը 1,3—2,5 մ է, ժամանակին ունեցել են մինչև 9—12 մ բարձրություն։ Տեղ-տեղ նկատվում են նաև պարիսպներին կից կառուցված քարե աստիճանների հետքերը, փայտե հեծանների համար թողնված տեղերը։ Այժմ բերդի պարսպաշարքերի մեծ մասը քայքայվել և ավերակների է վերածվել։ Դրանց բարձրու-

թյունը այժմ որոշ տեղերում հասնում է 4—4,5 մ, իսկ առանձին շարքերի երկարությունը՝ 50—60 մ: Երնջակը շրջապատված է մի քանի պարսպաշարքերով։ Հարավ-արևելյան կիրճի կողմից բերդը պաշտպանվել է առաջնապարսպով, միջնապարսպով և ներքնապարսպով։ Այստեղ տեղանքի թեքադրանքով առաջնապարիսպն ու միջնապարիսպը ինչպես ներքնապարսպից, այնպես էլ իրարից ունեն մոտ 100—110 մ հեռավորություն։ Այժմ միջնապարիսպն ու առաջնապարիսպը մեծ մասամբ ավերված են, իսկ ներքնապարիսպը, ուր տեղադրված է բերդի մուտքերից մեկը, երկարությամբ հիմնականում պահպանվում է։ Դեպի բերդ բարձրացող այս կիրճը հյուսիսային և հարավային կողմերի լեռնափեշերից մինչև բուն լեռան անմատչելի ծերպերը ևս պաշտպանվել է հզոր պարսպաշարքերով, որոնց ավերակներում նկատելի են նաև մի շարք քառանկյունի աշտարակների հետքեր։



Նկ. 4. Երնջակ բերդի մուտքերի հատակագծերը։

Երնջակ բերդի հարավ-արևելյան կիրճի ներքնապարիսպում գտնվող մուտքը (նկ. 4, գծ. 1) ունի 2,7 մ լայնություն, որի պարսպին ներքուստ կից՝ երկու կողմերում, կառուցված են 5 սենյակներ։ Մուտքի հյուսիսային կողմի երկու սենյակները ունեն 4 մ լայնություն և 3,5 մ երկարություն և մեկական մուտքեր՝ արևմտյան կողմից։ Մուտքի հարավային կողմում կառուցված 3 սենյակներն ունեն 4 մ լայնություն և տարբեր երկարություն։ Մուտքի կողմից առաջին սենյակն ունի 2,85 մ երկարություն և մեկ մուտք, որը բացվում է անմիջապես պարսպի մուտքի վրա և ծառայել է որպես պահակատուն։ Երկրորդ և երրորդ սենյակների մուտքերը բացված են արևմուտքից. գրանցից առաջինն ունի 8 մ երկարություն, իսկ երկրորդը՝ 16 մ: Այդ սենյակները, բնակատեղի լինելուց բացի, ունեն պաշտպանական բնույթ և ծառայել են որպես պահակատներ ու զորատեղեր։ Երնջակի այս մուտքի պահակասենյակների առկայությունն ու կառուցվածքը հիշեցնում է Նախիջևանի մյուս նշանավոր բերդի՝ Ճահուկի, հյուսիս-արևմտյան պարսպաշարքի անկյուններում տեղադրված մուտքերի պահակասենյակները[39]։

Երնջակ բերդը հյուսիս-արևմտյան կողմից, ուր գտնվում է իշխանական պալատի համալիրը, պաշտպանվում է 8 շարք պարիսպներով։ Այստեղ առաջ-

39 Ա. Այվազյան, Արրա և Ճահուկ բերդերը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», № 9, 1976, էջ 88, աղ. 1, գծ. 3, 4)։

նապարիսպներն ունեցել են ավելի ցածր բարձրություններ, քան միջնապարիսպներն ու ներքնապարիսպները։ Պարսպաշարքերը կառուցված են իրարից 5—6 մ հեռու և ունեցել են բուրգերի ու աշտարակների, պահակատների ու զորանոցների մի ամբողջ շարան (նկ. 5)։ Հյուսիս-արևմտյան պարսպաշարքերի առանձին շարքերի ու հատվածների շինարարական տեխնիկան մի շարք զուգահեռներ ունի ուրարտական շինարվեստի հետ։ Այստեղ տձև քարերով կերտված շարվածքներում կան լավ տաշված ու երեսապատված քարեր,



Նկ. 5. Մի հատված Երնջակ բերդի համալիրի ավերակներից։

որոնք ունեն նաև վարպետների նշաններ։ Բերդի կողմից երրորդ և չորրորդ պարսպաշարքերի անվնաս հատվածներում կան անհիմք շարվածքներ, որոնցում օգտագործված են նաև անմշակ, ինչպես նաև երեսն ու եզրերը մշակված քարաշարքեր։ Պարսպաշարքերի հիմնաշարերում հանդիպում են նաև առանց շաղախի ու երեսապատման շարքեր, որոնց քարերն ունեն 1,5 մ միջին երկարություն և 0,8—1 մ միջին բարձրություն։ Առանձին պարսպաշարքերի համար, վտանգավոր և խոցելի հատվածներում, 0,6—1,2 մ բարձրությամբ կառուցված են նաև պատնեշ-պատեր։ Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այս պարսպաշարքերում թողնված բերդի մուտքերը։ Ի միջի այլոց, առաջնապարսպից մինչև բուն բերդի շինություններին հասնելը մուտք-ճանապարհը անցել է նաև հաջորդ 7 պարսպաշարքերով։ Ցավոք, ութերորդ և երկրորդ պարսպաշարքերի մուտքերից բացի մյուսներն այժմ ավերված են և առանց պեղումների նրանց տեղերը և կազմությունը ստույգ հնարավոր չէ վերականգնել։ Սակայն պարզ է, որ ճանապարհը պարսպաշարքերով անցել է ոչ թե ուղիղ գծով, այլ զիգզագաձև, որը մատնանշում է պարսպաշարքերում մուտքի տարբեր տեղերում լինելը։ Այդ հանգամանքը սահմանափակել է թշնամու գործունեության դաշտը, նրա ուժերի կենտրոնա-

ցումը և բերդապաշտպաններիս հնարավորություն է տվել ավելի արագ կողմնորոշվել, ինչպես նաև 3—4 կողմից թշնամուն խաչաձև հարվածի տակ առնել։ Երնջակ բերդի ութերորդ պարսպաշարքի գլխավոր մուտքը (նկ. 6) տեղադրված է երկու աշտարակների միջև, որի հատակագծման հիմքում ընկած է անցախուցով բաժանված կրկնակի դարպասներով մուտքերի սկզբունքը (նկ. 4, գծ. 2)։ Այստեղ մուտքի դարպասները միմյանց նկատմամբ տեղադրված են 90°-ի տակ և սահմանափակելով հարձակվողների գործողությունները, բերդապաշտպաններին տվել են լայն ճակատով եռակողմ գրոհներ կազմակերպելու հնարավորություն։ Հատակագծային կառուցվածքով Երնջակի այս մուտքը հիշեցնում է ուրարտական Էրեբունի և Արգիշտիխինիլի բերդերի մուտքերի[40] ճարտարապետության սկզբունքները։



Նկ. 6 Երնջակ բերդի հյուսիս-արևմտյան մուտքը։

Առանձնակի ուշադրության են արժանի նաև բերդի 9 ջրամբարները, որոնց կառուցման հնարամիտ սիստեմը հնարավորություն է տվել բերդի պաշտպաններին երկար ժամանակով ապահովելու ջրով։ Ջրամբարները փորվել են ժայռերի հյուսիսային կողմերում և ստվերոտ վայրերում, որի շնորհիվ կրճատվել է ջրի կորուստը։ Ջրամբարներից վերև գտնվող ժայռերի լանջերին փորվել են բազմաթիվ առվակներ, որոնցում հավաքված անձրևաջրերն ու ձնհալի ջրերն անկորուստ ի մի հավաքվելով մայր առվակներում՝ թափվել են ջրամբարները։ Ջրամբարների մի մասի հատակային մասերում կառուցել են նաև հրակայուն և ջրամերժ շերտեր, որը ևս զգալի չափով կրճատել է ջրի կորուստը։ Առանձին ջրամբարների թեքադիր հատվածները շարվել են սրբատաշ քարերով և կրաշաղախով։ Այժմ ջրամբարներից երկուսը լցված են, իսկ յոթն ըստ տեղաբաշխվածության և մեր պայմանական համարակալության գտնվում են բերդի հետևյալ հատվածներում։

---

40 Կ. Ղաֆադարյան, Դիտողություններ ուրարտական ամրաշինությունների վերաբերյալ («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 160, աղյուսակ 3, գծ. 6, 7)։

№ 1 ջրամբարը գտնվում է իշխանական պալատից 45—50 մ հարավ։ Ունի 6×4,2×4 մ չափեր։ № 2 ջրամբարը գտնվում է № 1-ից 30—35 մ դեպի հարավ-արևելք, անմիջապես բարձրագագաթ ժայռի տակ։ Ունի 6,3×15,5×4 մ չափեր։ Այն հարավից և արևմուտքից ունի սրբատաշ և կապտերանգ բազալտով, աղյուսով ու կրաշաղախով 1,85 մ հաստությամբ շարված պատնեշ-պատ։ № 3 ջրամբարը գտնվում է իշխանական պալատից 60—70 մ դեպի հյուսիս-արևելք, սրածայր ժայռի տակ։ Ունի 6×12×4 մ չափեր։ № 4 ջրամբարը գտնվում է հարավ-արևելյան ճյուղի վրա, այդ ճյուղի ներքնապարսպի մուտքից 35—40 մ դեպի հյուսիս։ Ունի 6×10,5×9—10 մ չափեր։ Այն հարավ-արևմտյան անկյունում ունի 1,85 մ հաստությամբ պատնեշ-պատ։ № 5 ջրամբարը գտնվում է № 4-ից 10—15 մ արևմուտք։ Այս ջրամբարը շրջանաձև է՝ ունի 3,5 մ տրամագիծ և 40—45 սմ խորություն։ № 6 ջրամբարը գտնվում է լեռան հարավ-արևելյան ճյուղի գագաթնամասից բավականին ներքև, բերդի մուտքից 35—40 մ հարավ։ Ունի 4,6×15×5—5,5 մ չափեր։ № 7 ջրամբարը գտնվում է № 6-ից 60—70 մ հարավ-արևմուտք՝ շինությունների մոտ։ Ունի 5,6×10×4—4,5 մ չափեր։ Արևմտյան կողմից ունի 2 մ հաստությամբ պատնեշ-պատ։ Բերդի բարձունքի, նրա շրջակայքի առանձին ավերակների ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ Երնջակն ունեցել է նաև քողարկված գետնուղի։ Վերջինս, մեր կարծիքով, գտնվել է բերդի հյուսիսային կամ հյուսիս-արևելյան կողմերում։

Երնջակը լինելով անառիկ բերդ-դղյակ, եղել է նաև վարչաքաղաքական կենտրոն, որի շուրջը հիմնվել և վաղ միջնադարից սկսած զարգացում է ապրել գավառի կենտրոն Երնջակ քաղաքը։ Վերջինս IX—X դդ. ապրել է հասարակական ու մշակութային բուռն կյանքով։ Երնջակ քաղաքը տարածված է եղել անմիջապես բերդի շուրջը՝ նրա հարավային և արևելյան կողմերում, գետափնյա հարթություններում և բլուրների վրա։ Այժմ այդ քաղաքի ավերակները խիստ քայքայված են և ծածկված հողի շերտով։ Բերդի հյուսիս-արևելյան կողմի ձորակում տարածված Երնջակ քաղաքի որոշ ավերակների արտաքին նշաններն ապացուցում են, որ քաղաքը վերցված է եղել պարսպի մեջ և գրավել է ավելի քան 4—4,5 քառ. կմ տարածություն։ 1930-ական թվականներին Երնջակ քաղաքի ավերակներից հայտնաբերված բազմաթիվ և բազմատեսակ խեցեղենի մնացորդների, ջրատար կավե խողովակների և այլևայլ նյութական մշակույթի բեկորները Ի. Շչեբլիկինին հիմք են տվել Երնջակ քաղաքի հիմնադրումը թվագրել մեր թվականության առաջին դարերով[41]։

Բերդի և քաղաքի մոտից հոսող Երնջակ գետից սկիզբ են առնում այժմ էլ գործող երկու հին ջրանցքներ, որոնք կոչվել են «Նահապետի առուներ»։ Վերջիններիս հին շրջանի շինարարական տեխնիկան ակնհայտորեն նմանվում է ուրարտական ջրանցքների շինարվեստին։ Այդ ջրանցքները, որոնք մի քանի անգամ նորոգվել են, ունեն 30—35 կմ երկարություն և հոսում են մինչև Հին Ջուղայի ու Կզնուտ գյուղի մոտակայքը։

Երնջակ բերդից 300—400 մ հյուսիս-արևմուտք՝ դեպի Շահկերտ տանող ճանապարհի ձախ կողմի եռանկյունաձև փոքրիկ բլրակների վրա գտնվում է բերդի գերեզմանատունը, որի 30—40-ի հասնող շրջանաձև բլրակների նման-

[41] И. Щеблыкин, նշվ. աշխ., էջ 69։

վող ամեն մի գերեզման ամփոփում է ռազմի դաշտում ընկած 50—60 բերդապաշտպանների մարմինները, որոնց հիշատակը հավերժացնող դամբարանարլուրների վրա դրված է մեկական սապանաքար (նաև խոյաձև)։ Վերջիններիս մի քանիսի վրա նշմարվում են քայքայված վիմագրեր, որոնց մշակման և արձանագրման եղանակը մատնանշում է XI—XV դդ.։ Այս դամբարանադաշտի մի քանի ուղղանկյուն շինությունների փլատակների առկայությունից կարելի է եզրակացնել, որ այդտեղ եղել են նաև իշխանական տոհմական դամբարաններ։ Գերեզմանատեղուց 300—400 մ դեպի հյուսիս տեսանելի են բերդի զորակայանի շինությունների հետքերը։

Այսպիսով, Երնջակ բերդի, ինչպես նաև նրա շրջակայքի պատմանագիտական տեղավայրերի հին շրջանի շինարվեստի ու ճարտարապետության սկզբունքները ակնհայտորեն ցույց են տալիս, որ Երնջակը որպես բերդ հիմնվել է դեռևս հնագույն ժամանակներում և կարևոր ռազմաստրատեգիական կետ է հանդիսացել։ Վաղ միջնադարում, ինչպես նաև IX—X դդ. այս հինավուրց բերդը հիմնավոր կերպով վերանորոգվել է և հարմարեցվել նոր ժամանակների ռազմարվեստի պահանջներին, որի շնորհիվ այն դարձել է Հայաստանի անառիկ բերդերից մեկը։ Իշխանական պալատի, ընակավայրերի և ամրությունների կոմպոզիցիոն հիմունքներով Երնջակ բերդը հար և նման է պատմական Հայաստանի IX—X դդ. ամրոցներին։

КРЕПОСТЬ ЕРНДЖАК

АРГАМ АЙВАЗЯН

Резюме

Крепость Ернджак, которая часто упоминается в древних армянских и иноязычных источниках с начала X в., до сих пор не подвергалась исследованию ни в историко-археологическом, ни в архитектурном плане. Краткое описание этой крепости—дворца резиденции сюникских киязей-ишханов в области Ернджак исторической Армении (ныне р-н Джульфы Нахичеванской АССР) встречается в ряде географических и историко-этнографических работ середины XIX в.

Архитектурные особенности Ернджака и других древних сооружений в прилегающих к нему историко-археологических районах указывают на то, что крепость эта была возведена еще в древнейшую эпоху и являлась важным военным пунктом. В IX—X вв. армянские ишханы не раз, сообразуясь с военным, политическим и экономическим положением княжества, коренным образом перестраивали ее. Своими композиционными особенностями, расположением княжеского дворца, жилых покоев и оборонительных укреплений Ернджак идентичен армянским крепостным сооружениям IX—X вв.